SIGMA
Support for Improvement in Governance and Management
A joint initiative of the OECD and the EU, principally financed by the EU

Կարճ գրություն 18

Օգոստոս 2011

Պետական գնումներ

Կոնցեսիաներ և պետական-մասնավոր գործընկերություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ի±նչ է կոնցեսիան:
- Ազգային իրավունքում “կոնցեսիա” տերմինի տարբեր իմաստներով օգտագործումը
- Կիրառվու±մ է արդյոք Հրահանգը կոնցեսիաների նկատմամբ:
- Ո±րն է դիրքորոշումը, երբ կոնցեսիան ներառում է աշխատանքների և ծառայությունների խառնուրդ:
- Ի±նչ պարտավորություններ գոյություն ունեն ծառայությունների կոնցեսիայի շնորհման հետ կապված:
- Ի±նչ պարտավորություններ գոյություն ունեն աշխատանքների կոնցեսիայի շնորհման հետ կապված:
- Ի±նչ է պետական-մասնավոր գործընկերությունը:
- Ինչպե±ս է կիրառվում Հրահանգը պետական-մասնավոր գործընկերության նկատմամբ:
- Կոնցեսիաները կոմունալ ծառայությունների ոլորտում

www.sigmaweb.org
This document has been produced with the financial assistance of the European Union. The views expressed herein can in no way be taken to reflect the official opinion of the European Union, and do not necessarily reflect the views of the OECD and its member countries or of beneficiary countries participating in the SIGMA programme.

Ի±նչ են կոնցեսիաները:

Կոնցեսիաները սահմանված են հանրային ոլորտի գնումների 2004/17/ԵՀ Հրահանգում (“Հրահանգ”)՝ որպես պայմանագրեր, որոնց շրջանակում կատարվելիք աշխատանքների կամ մատուցվելիք ծառայությունների դիմաց փոխհատուցումն իրականացվում է բացառապես շահագործման իրավունքից կամ շահագործման այս իրավունքից՝ վճարման հետ մեկտեղ:

Աշխատանքների և ծառայությունների կոնցեսիաները տարբեր կերպ են կարգավորվում Հրահանգով: Աշխատանքների կոնցեսիաների շնորհման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հրահանգով,: Ծառայությունների կոնցեսիաների շնորհման հետ կապված հարաբերությունները դուրս են հրահանգի կարգավորման դաշտից, բացառությամբ այն դեպքերի, երբ ծառայությունների կոնցեսիայի շնորհման ժամանակ առկա ք հնարավոր միջսահմանային շահ:

Քննարկելիս, թե արդյոք պայմանավորվածությունը համապատասխանում է կոնցեսիայի սահմանմանը, առկա են երկու հիմնական գործոններ, որոնք ունեն հատուկ կարևորության.

- **Փոխհատուցում**[1]- Փոխհատուցումը չպետք է ամբողջությամբ իրականացվի դրամի ձևով: Այն կարող էմասնակիորեն իրականացվել դրամի ձևով կամ բացառապես աշխատանքները/ծառայությունները շահագործելու իրավունքից: Գործնականում սա նշանակում է, որ փոխհատուցման մի մասը կամ այն ամբողջությամբ ձևավորվում է երրորդ կողմի միջոցների հաշվին,

  և

- **Ռիսկը**– Հնարավորությունից օգտվելու ռիսկը կրում է կոնցեսիոները: Կոնցեսիոները հիմնականում կրում է օրինակ, գործառնական և/կամ ֆինանսական ռիսկը հանրային ծառայություն մատուցելու կամ հանրային

[1] “Փոխհատուցում” տերմինը կարող է նշանակել ֆինանսական կամ դրամական վճարումներ՝ ստացված կոնցեսիոների կողմից պետական պատվրատուից և/կամ այլ աղբյուրներից, բայց այս տերմինը կարող է նաև ընդգրկել այլ օգուտները կամ արժեքները՝ ստացված աշխատանքներից կամ ծառայություններից, որոնք կարող են ամբողջապես ֆինանսական չլինել:

աշխատանք կատարելու՝ ի հատուցումն այդ ծառայության կամ աշխատանքի շահագործումից եկամուտների ստացման հնարավորության: Ռիսկի՝ տնտեսվարող սուբյեկտներին փոխանցման բացակայությունը վկայում է սովորական պետական պատվերի պայմանագրի մասին, որը չի կարգավորվում Հրահանգի՝ կոնցեսիայի մասին դրույթներովն: Ռիսկի՝ կոնցեսիայի շահագործման հնարավորությանը հատկանշական լինելու պահանջը նշվել է Եվրոպական Հանձնաժողովի կողմից հետևյալ կերպ.

..Կոնցեսիաների հիմնական հատկանիշը կոնցեսիոների իրավունքն է՝ շահագործել շինությունը կամ մատուցված ծառայությունը, որը շնորհվել է որպես փոխհատուցում՝ շինությունը կառուցելու կամ ծառայությունը մատուցելու համար: Հիմնական տարբերությունը պետական գնումներից՝ ռիսկն է՝ հատուկ այդպիսի շահագործմանը, որը կոնցեսիոները, որը սովորաբար տրամադրում է համապատասխան ծրագրի առնվազն մի մասի ֆինանսավորումը, պետք է կրի:

Հաղորդագրություն պետական-մասնավոր գործընկերության և պետական գնումների և կոնցեսիաների մասին COM (2005) էջ 569 3.1 պարբերություն

Սա լավագույնս հասկացվում է՝ օգտագործելով գործնական օրինակը: ՀՆերքոհիշյալ օրինակները չափազանց պարզ են և կոնցեսիայի դասակարգումը պայմանավորվում է կոնկրետ կոնցեսիայի մանրամասներից:

Աշխատանքի կոնցեսիա. Կոնցեսիաները հաճախ կիրառվում են՝ իրագործելու ենթակառուցվածքներին վերաբերող ծավալուն ծրագրերը, ինչպիսիք են ճանապարհների, կամուրջների կամ թունելների շինարարությունը և գործարկումը: Երբ կոնցեսիոները ստանում է իր ողջ փոխհատուցումը՝ անմիջապես օգտագործողներից գանձված վճարների տեսքով, փոխհատուցումը ստացվում է աշխատանքի շահագործումից, և ոչ թե պետական պատվիրատուից, որը շնորհում է կոնցեսիան: Կոնցեսիոները ստանձնում է ֆինանսական և գործառնական ռիսկը, երբ այն ֆինանսավորում է աշխատանքի իրականացումը և գարծարկում է այն՝ առանց երաշխիքի, որ այն հնարավորություն կունենա ետ վերադարձնել իր ներդրումը և շահույթ ստանալ կոնցեսիայի ժամանակաշրջանում Սա “աշխատանքի կոնցեսիայի” օրինակ է:

Եթե պետական պատվիրատուն համաձայնում է վճարումներ կատարել կոնցեսիոներին այն դեպքում, երբ երրորդ կողմ հանդիսացող օգտագործողներից ստացվող եկամուտը բավարար չէ կոնցեսիոների կատարած ներդրումը ետ ստանալու համար, ենթադրվում է, որ կոնսեցիոներին ամբողջությամբ չի փոխանցվել ռիսկը, ինչի արդյունքում տվյալ գործարքը,կորակվի որպես կոնցեսիայի պայմաններին չհամապատասխանող: Այս դեպքում գործարքը որակվի որպես աշխատանքների կատարման պայմանագիր:

Ծառայությունների մատուցման պայմանագիր. Կոնցեսիաները նաև օգտագործվում են այնպիսի ծրագրերում, որոնք պահանջում են գործարկման և պահպանման, բայց ոչ կառուցման աշխատանքներ, օրինակ, կոնցեսիայի շնորհումը գոյություն ունեցող երկաթուղու կամ նավահանգստի շահագործման համար՝ երրորդ անձանցից վճարներ գանձելով այդ հարմարություններից օգտվելու համար կամ կոնցեսիայի շնորհումը սննդի օբյեկտ աշխատեցնելու համար և վճարներ գանձելը անիջականորեն այդ օբյեկտից օգտվողներից՝ գնված ուտելիքի կամ խմիչքների համար: Նմանատիպ կոնցեսիաները որակվում են որպես “ծառայությունների մատուցման” կոնցեսիաների օրինակներ:

Երբ վերոհիշյալ օրինակում պետական պատվիրատուն օբյեկտը տրամադրում է տնտեսվարող սուբյեկտի օգտագործմանը և նաև համաձայնում է վճարումներ կատարել տնտեսվարող սուբյեկտին՝ օբյեկտի աշխատեցման հիմնական ծախսերը հատուցելու կամ ծառայության մի մասը սուբսիդավորելու համար, սա կարող է նշանակել, որ տնտեսվարող սուբյեկտը չի կրում բավարար ռիսկ, որպեսզի գործարքը համապատասխանի ծառայությունների կոնցեսիայի սահմանմանը: Այս դեպքում գործարքը որակվի որպես ծառայությունների մատուցման պայմանագիր:

Կարևոր նշում - “Կոնցեսիա” տերմինի տարբեր իմաստներով օգտագործումը ազգային օրենքի համաձայն

Աշխատանքների և ծառայությունների կոնցեսիաների հասկացությունը ԵՄ օրենսդրությամբ սահմանված հասկացություններ են, որոնք պետք է մեկնաբանվեն ԵՄ օրենսդրությանը համապատասխան: Ազգային օրենքները կոնցեսիաները կարող են սահմանել տարբեր կերպ: Սա նշանակում է, որ ազգային օրենքներով սահմանված հասկացության տակ ներառվող կոնսեցիաները Հրահանգի համաձայն

չորակվեն որպես կոնսեցիաներ: Օրինակ՝ ազգային օրենքով բնական ռեսուրսների շահագործման իրավունքի շնորհումը, ինչպիսին է ածխի արդյունահանումը կամ տաքսի ծառայությունների կարգավորումը՝ օպերատորների լիցենզիաների շնորհման միջոցով, որակվում են որպես կոնցեսիաներ. սակայն դրանք Հրահանգի համաձայն չեն որակվում որպես կոնսեցիանե, չնայած այս պարագայում կկիրառվեն ընդհանուր սկզբունքները, եթե պայմանագիրը ներկայացնում է հավանական միջսահմանային հետաքրքրություն: Հավասարապես, որոշ պայմանագրեր, որոնք ազգային օրենքով չեն որակվում որպես կոնցեսիաներ, կարող են այդպիսիք որակվել ԵՄ օրենսդրության համաձայն:

Այսպիսով, շատ կարևոր է հասկանալ և կիրառել ԵՄ սահմանումները, երբ քննարկվում է, թե արդյոք առաջարկված պայմանավորվածությունը կոնցեսիա է, թե ոչ՝ Հրահանգում նախատեսված նպատակների համար:

Կիրառվու±մ է արդյոք Հրահանգը կոնցեսիաների նկատմամբ:

Հրահանգը կիրառվում է աշխատանքների կոնցեսիաների, բայց ոչ ծառայությունների կոնցեսիաների նկատմամբ: Հրահանգում կան դրույթներ, որոնք սահմանում են աշխատանքների կոնցեսիաների շնորհման պայմանները: Հրահանգը չի կարգավորում ծառայությունների կոնցեսիաների շնորհման հետ կապված պայմանները: Պայմանագրի ընդհանուր սկզբունքները կիրառվում են և՛ աշխատանքների կոնցեսիաների, և՛ ծառայությունների կոնցեսիաների ձեռքբերման նկատմամբ:

Ո±րն է դիրքորոշումը, երբ կոնցեսիան ներառում է աշխատանքների և ծառայությունների խառնուրդ:

Երբ կոնցեսիան ներառում է և՛ աշխատանքների, և՛ ծառայությունների խառնուրդ, անհրաժեշտ է որոշել, թե արդյոք այն որակվում է որպես աշխատանքների կոնցեսիա, թե որպես ծառայությունների կոնցեսիա: Այս տարբերակումը հատկապես կարևոր է, քանի որ, ինչպես արդեն նկարագրվել է է, Հրահանգը ներառում է դրույթներ, որոնք վերաբերում են միայն աշխատանքների կոնցեսիաները ձեռքբերմանը: Խառը կոնցեսիան, որն ընդգրկում է և՛

աշխատանքներ, և՛ ծառայություններ, հասկանալու համար, պետական պատվիրատուն պետք է հաշվի առնի, թե որ տարրն է համարվում կոնցեսիայի գլխավոր նպատակը: Երբ գլխավոր նպատակը աշխատանքների կատարումն է, իսկ ծառայություններն ընդամենը օժանդակում են այդ նպատակին, պայմանագիրը կորակվի որպես աշխատանքի կոնցեսիա: Կոնցեսիան, որի նպատակը ծառայություններն են և այն իր մեջ ներառում է "աշխատանքներ" սահմանմանը համապատասխանող գործողություններ, որոնք միայն օժանդակ են գլխավոր նպատակին, կորակվի որպես ծառայությունների կոնցեսիա:

Օրինակ, տեղական իշխանությունը ցանկանում է շնորհել կոնցեսիայի պայմանագիրը տնտեսվարող սուբյեկտին՝ 20 տարով արվեստների կենտրոն աշխատեցնելու համար: Տեղական իշխանությունը արվեստների կենտրոնի շենքի սեփականատերն է: Փոխհատուցումը, որը ստանում է տնտեսվարող սուբյեկտը, պետք է լինի հանրության այն անդամների կողմից կատարվող վճարները, որոնք օգտվում են կենտրոնի հարմարություններից: Որպես կոնցեսիայի մաս՝ տեղական իշխանությունը տնտեսվարող սուբյեկտից պահանջում է իր վրա վերցնել կենտրոնի վերականգնման աշխատանքները՝ կոնցեսիայի ժամանակաշրջանի առաջին հինգ տարիների ընթացքում՝ նոր ռեստորան և խոհանոցներ ստեղծելու, շենքում հաշմանդամների տեղաշարժվելու հնարավորություններ ավելի բարելավելու, վերելակն ավելի ժամանակակից դարձնելու և նոր զուգարաններ տեղադրելու համար: Այս դեպքում օրինական է պնդել, որ կոնցեսիայի գլխավոր նպատակը արվեստի կենտրոնի երկարաժամկետ գործարկումն է: Վերականգնողական աշխատանքները, որոնք ընդհանուր պայմանավորվածության մասն են, կարող են դիտարկվել որպես օժանդակ՝ գլխավոր նպատակին: Այս դեպքում գործարքը կորակվի որպես ծառայությունների կոնցեսիա:

Ի±նչ պարտականություններ գոյություն ունեն ծառայությունների կոնցեսիայի շնորհման հետ կապված:

Ինչպես արդեն նկարագրվել է, ծառայությունների կոնցեսիայի շնորհումը չի կարգավորվում Հրահանգով: ԵՄ նախադեպային իրավունքը սահմանել է, որ Պայմանագրի սկզբունքները և հիմնարար կանոնները, որոնք ծագում են այս սկզբունքներից, այնուամենայնիվ, կիրառվում են, երբ ծառայությունների

կոնցեսիան, որը պետք է շնորհվի, միջսահմանային հետաքրքրություն է ներկայացնում: Այդ դեպքում, ընդհանուր առմամբ, Պայմանագրի հիմնարար կանոնները, մասնավորապես՝ ազգության հիմքի վրա խտրականության բացառումը և թափանցիկությունը, կիրառվում են: Թափանցիկության ապահովման նպատակը կայանում է ցանկացած հավանական մասնակցի հնարավորություն ընձեռել մասնակցելու գործընթացին:: Գործնականում սա նշանակում է, որ պետական պատվիրատուն, որը նախատեսում է շնորհել ծառայությունների կոնցեսիան, պետք է հաշվի առնի, թե արդյոք դա հետաքրքրություն ներկայացնում է այլ անդամ պետություններից մասնակիցներին համար, թե ոչ: Այս կապակցությամբ գործընթացը պետք է այնպես կազմակերպվի , որ այլ անդամ պետությունների մասնակիցները ևս տեղյակ լինեն դրա մասին՝ գործընթացի կազմակերպումն իրականացվի արդար, թափանցիկ և ոչ խտրական եղանակով: Գործնականում, տեղական օրենսդրությունը ծառայությունների կոնցեսիայի շնորհման գործընթացի կազմակերպման համար պետք է սահմանի ավելի շատ պարտականություններ:

Ի±նչ պարտավորություններ գոյություն ունեն աշխատանքների կոնցեսիայի հետ կապված:

Հրահանգը սահմանում է պայմաններ, որոնք կիրառվում են պետական պատվիրատուի կողմից՝ աշխատանքների կոնցեսիայի շնորհման գործընթացի ժամանակ:

Պետական պատվիրատուն պետք է աշխատանքների կոնցեսիայի շնորհման մասին ծանուցում հրապարակի ի Եվրոպական Միության Պաշտոնական Տեղեկագրում (ԵՄՊՏ)՝ օգտագործելով կոնցեսիայի պայմանագրի ծանուցման ստանդարտ ձևաթուղթը: Այս ծանուցումը պետք է ուղարկվի Հրահանգի պահանջների համաձայն և հրատարակվի ԵՄՊՏ-ում: Մասնակիցների կողմից հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանվում է ծանուցման ուղարկման օրվանցի հաշված նվազագույնը 52 օր (45 օր, երբ ծանուցումն ուղարկվել է էլեկտրոնային եղանակով):

Պետական պատվիրատուի համար չկան սահմանված պահանջներ այն մասին, թե ինչպես է վերջինս կազմակերպում գործընթացը ՝ տալով նրան ազատություն որոշելու այն պայմանները, որոնք լավագույնս կբավարարեն կարիքները: Պետական

պատվիրատուն, այնուամենայնիվ, պետք է ապահովի, որ գործընթացն իրականացվի թափանցիկ և ոչ խտրական եղանակով:

Կան մանրամասն դրույթներ՝ կոնցեսիոներների կողմից ենթապայմանագրերի շնորհման վերաբերյալ: Հրահանգը սահմանում է, որ պետական պատվիրատուն կարող է կա՛մ պահանջել կոնցեսիոներց շնորհել աշխատանքների ամբողջական արժեքի նվազագույնը 30%-ը երրորդ անձանց (կոնցեսիոները կարող է սահմանել ավելի բարձր տոկոս), կա՛մ պահանջել կոնցեսիաների թեկնածուներից իրենց հայտերի մեջ նշել այն աշխատանքի ամբողջական արժեքը, որոնք նրանք մտադիր են տրամադրել երրորդ անձանց:

Հրահանգը նաև պահանջում է, որ կոնցեսիոները պայմանագրերը շնորհի երրորդ անձնաց՝ օգտագործելով մրցակցային գործընթացներ: Այն դեպքում, երբ կոնցեսիոները պետական պատվիրատու է (ինչպես սահմանված է Հրահանգում. *Տե՛ս Գնումների կարճ գրություն 3- Ո±րն է պետական պատվիրատուն*), այն պետք է օգտագործի ստանդարտ մրցակցային գործընթացները, որոնք նախատեսված են Հրահանգում: Երբ կոնցեսիոները պետական պատվիրատու չէ, կոնցեսիոները պետք է կիրառի Հրահանգը՝ հայտարարություն հրապարակելով ԵՄՊՏ-ում: Այս պահանջը չի կիրառվում, երբ կոնցեսիոների կողմից շնորհումն արվում է այն երրորդ անձին, որը փոխկապված կազմակերպություն է: Հրահանգում կան մանրամասն դրույթներ, որոնք սահմանում են, թե որն է համարվում փոխկապված կազմակերպություն:

Ի±նչ է ՊՄԳ-ն:

ՊՄԳ հապավումը վերաբերում է պետական-մասնավոր գործընկերությանը: Չկա ՊՄԳ-ի մեկ կամ պարզ սահմանում, քանի որ այս հասկացությունն ընդգրկում է պայմանագրերի մի շարք տարբեր տեսակներ և այլ առաքման մոդելներ:

ՊՄԳ-ն կարող է որակվել որպես ցանկացած ձևի համագործակցություն պետական պատվիրատուի և մասնավոր հատվածի տնտեսվարող սուբյեկտների միջև, հաճախ ապահովելու համար ենթակառուցվածքների (աշխատանքների) և/կամ ծառայությունների մատուցման ֆինանսավորումը, կառուցումը, վերականգնումը, ղեկավարումը և պահպանումը: Մասնակցող կազմակերպությունները հաճախ անվանվում են “գործընկերներ”, որը օգատգործվում է ոչ իրավական իմաստով:

ՊՄԳ-ների գլխավոր հատկանիշը, որպես կանոն, ռիսկի կիսումն է կամ դրա փոխանցումը մասնավոր հատվածի գործընկերոջը և ՊՄԳ-ները հաճախ, բայց ոչ միշտ, ունեն երկար տևողություն:

Վճարման և ֆինանսավորման մեթոդները տարբեր են ՊՄԳ-ներում: Վճարումները կարող են լինել պետական պատվիրատուի կողմից կամ ստացված երրորդ անձանցից, ինչպիսիք են հարմարություններից օգտվողները (որի դեպքում այն կարող է դասակարգվել որպես կոնցեսիա) կամ լինել մի քանի աղբյուրների համակցություն: Ֆինանսավորումը կարող է լինել պետական պատվիրատուից, մասնավոր հատվածի գործընկերոջից, արտաքին ֆոնդերից, ինչպիսիք են բանկերը կամ այլ փոխատուները կամ աղբյուրների համակցությունից: ՊՄԳ ծրագրերի բնույթից ելնելով՝ իրավական փաստաթղթերը, որպես կանոն, բարդ են և բազմաշերտ:

ՊՄԳ-ի կառուցվածքը կարող է լինել պայմանագրային կամ ինստիտուցիոնալ: Ինստիտուցիոնալ ՊՄԳ-ն (ԻՊՄԳ) ՊՄԳ-ի տեսակ է, որը ներառում է մատակարարման համակարգի խառը կանոնադրական կապիտալով կազմակերպության ստեղծում, ինչպիսին է համատեղ ձեռնարկությունը կամ այլ համատեղ կազմակերպություն, որին մասնակցում են և՛ պետական պատվիրատուն, և՛ մասնավոր հատվածի մասնակիցները: Մատակարարման համակարգին այնուհետև վստահվում է ՊՄԳ ենթակառուցվածքի կամ ծառայությունների ծրագրի իրականացումը, մասնավոր հատվածի գործընկերոջ և պետական հատվածի գործընկերոջ շարունակական և ակտիվ մասնակցությամբ:

Ինչպե±ս է կիրառվում Հրահանգը ՊՄԳ-ների նկատմամբ:

Հրահանգում չկա ՊՄԳ-ի իրավական սահմանումը և սա Հրահանգում օգտագործվող տերմին չէ: ԵՄ իրավական համակարգը չի պարունակում ՊՄԳ-ի մասին օրենք կամ հատուկ իրավական համակարգ, որը կսահմանի պետական պատվիրատուի կողմից մասնավոր գործընկերների ընտրության գործընթացը ՊՄԳ-ի համար: Երբ երկրները որոշում են կարգավորել ՊՄԳ-ները առանձին, չկա առանձին օրենսդրության պահանջ, որը կընդգրկի ՊՄԳ պայմանագրերի շնորհման ընթացակարգը: Պետական

գնումների օրենսդրությունը կիրառվում է ՊՄԳ-ների շնորհման ընթացակարգերի նկատմամբ:

ԵՄ գնումների կանոնների տեսանկյունից, ՊՄԳ-ները կա՛մ պետական պատվերի պայմանագրեր են, կոնցեսիայի պայմանագրեր (աշխատանքներ կամ ծառայություններ), կա՛մ պայմանագրեր, որոնք չեն կարգավորվում Հրահանգով: ՊՄԳ-ները, որոնք ծառայությունների կոնցեսիաներ են կամ պայմանագրեր են, որոնք միջսահմանային հետաքրքրություն են ներկայացնում, ենթակա են կարգավորվման Պայմանագրի հիմնարար սկզբունքներով և այս սկզբունքներից ծագող կանոններով, մասնավորապես, թափանցիկության, հավասար վերաբերմունքի, ոչ խտրականության, համամասնության և փոխադարձ ճանաչման սկզբունքները:

ՊՄԳ-ն, որը Հրահանգի համաձայն որակվում է որպես պետական պատվերի պայմանագիր, պետք է շնորհվի՝ օգտագործելով պետական պատվերի պայմանագրերի նկատմամբ կիրառվող, Հրահանգում սահմանված ընթացակարգերից մեկը: Պետական պատվիրատուն պետք է լրջորեն քննարկի ՊՄԳ պայմանագրերի շնորհման ամենահամապատասխան ընթացակարգը, որոնք հաճախ շատ բարդ են և հիմնականում պահանջում են բանակցություններ կողմերի միջև: Եթե ՊՄԳ պայմանագիրը դիտվում է որպես բավարար չափով բարդ և անդամ պետությունները ընդունել են Հրահանգի համապատասխան դրույթները, մրցակցային երկխոսությունը կարող է լինել օգտագործման համար հարմար ընթացակարգ: Հնարավոր է նաև, կիրառել հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի կիրառումը:

Երբ ՊՄԳ-ն աշխատանքների կոնցեսիա է, շնորհման գործընթացն իրականացվում է վերը նշված կանոններով:

Երբ կառուցվածքը ԻՊՄԳ է, միասնական ԵՄ գործընթացը, որը ղեկավարվում է Հրահանգով (պետական պատվերի պայմանագրերի կամ աշխատանքների կոնցեսիաների համար, եթե համապատասխան է) կարող է օգտագործվել և՛ ԻՊՄԳ մասնավոր հատվածի գործընկերներին նշանակելու, և՛ համատեղ մատակարարման համակարգի համար:

Կոնցեսիաները կոմունալ ծառայությունների ոլորտում

Եվրոպական Հանձնաժողովի՝ Համայնքի իրավունքի համաձայն Կոնցեսիաների վերաբերյալ բացատրական հաղորդագրությունը(ՊՏ 2000/C 121/2) պարունակում է հետևյալ տեղեկատվությունը՝ կոմունալ ծառայությունների ոլորտում կոնցեսիաների շնորհման հետ կապված.

93/38/ԵՏՀ Հրահանգը, որը վերաբերում է պայմանագրերին, որոնք շնորհվել են ջրի, էներգիայի, տրանսպորտի և հեռահաղորդակցության ոլորտներում գործող կազմակերպությունների կողմից (այսուհետ՝ "Կոմունալ ծառայությունների մասին Հրահանգ") չունի որևէ հատուկ կանոն աշխատանքների կոնցեսիայի կամ ծառայությունների կոնցեսիայի մասին:

Որոշելով, թե որ կանոնները պետք է կիրառվեն, շնորհատուի իրավասուբյեկտությունը, ինչպես նաև դրա գործունեության տեսակը, հետևաբար որոշիչ տարրերն են: Կան մի քանի հնարավոր իրավիճակներ:

Առաջին դեպքում պետությունը կամ այլ պետական կազմակերպություն, որը հատուկ չի գործում Կոմունալ ծառայությունների մասին Հրահանգով ղեկավարվող չորս ոլորտներից որևէ մեկում, շնորհում է կոնցեսիա, որը ներառում է տնտեսական գործունեություն այս չորս ոլորտներից որևէ մեկը: Պայմանագրի՝ վերևում նկարագրված կանոնները և սկզբունքները կիրառվում են այս շնորհման նկատմամբ: Աշխատանքների կոնցեսիայի ժամանակ կիրառվում է նաև Հրահանգի պայմանները: Երկրորդ դեպքում պետական կազմակերպությունը, որը հատուկ գործում է Կոմունալ ծառայությունների մասին Հրահանգով ղեկավարվող չորս ոլորտներից որևէ մեկում, որոշում է շնորհել կոնցեսիա: Պայմանագրի կանոնները և սկզբունքները, հետևաբար, կիրառելի են այնքան ժամանակ, քանի դեռ շնորհատուն պետական կազմակերպություն է: Նույնիսկ աշխատանքների կոնցեսիայի դեպքում կիրառելի են միայն Պայմանագրի կանոնները և սկզբունքները, քանի որ աշխատանքների Հրահանգը չի ընդգրկում կոնցեսիաները, որոնք շնորհվել են կազմակերպության կողմից, որը հատուկ գործում է 93/38/ԵՏՀ Հրահանգով ղեկավարվող չորս ոլորտներից որևէ մեկում:

Ի վերջո, եթե պատվիրատուն մասնավոր կազմակերպություն է, այն չի ղեկավարվում ոչ վերը նշված կանոններով ո՛չ սկզբունքներով

Տե՛ս *Գնումների կարճ գրություն 16- Գնումներ կոմունալ ծառայությունների կողմից* Կոմունալ ծառայությունների մասին Հրահանգով ղեկավարվող չորս ոլորտների մասին տեղեկատվության և ընդգրկված պայմանադիր կազմակերպությունների տեսակների մասին, ներառյալ՝ քննարկումը, թե ինչն է կազմում պետական կազմակերպություն:

Գործնական գրություն ՊՄԳ-ների սահմանների որոշման, գնման և ղեկավարման մասին

ՊՄԳ-ները, որպես կանոն, բարդ պայմանագրեր են, որոնք հաճախ երկարաժամկետ են: Ինչպես բոլոր բարդ կամ երկարաժամկետ պայմանագրերը, շատ կարևոր է ապահովել, որ պահանջները նախապես լրջորեն քննարկվեն և սահմանվեն, այնպես, որ մասնագրերը և պայմանագրի պայմաններն ընդգրկուն և հիմնավոր լինեն՝ թույլատրելով և՛ պետական պատվիրատուին, և՛ տնտեսավարող սուբյեկտներին ամբողջովին հասկանալ պայմանագրի գործողության ընթացքում ծրագրի բնույթը և նշանակությունը:

Գնումների ընթացակարգը պետք է շատ խիստ ձևով փորձարկի տնտեսվարող սուբյեկտների առաջարկները՝ ապահովելու համար, որ դրանք համապատասխանում են և կշարունակեն համապատասխանել պետական պատվիրատուի պեհանջներին պայմանագրի գործողության ընթացքում: Տե՛ս *Գնումների կարճ գրություն 10 –Որո±նք են պետական գնումների ընթացակարգերը և ե±րբ կարող են դրանք կիրառվել* գնումների համապատասխան ընթացակարգի մասին հետագա տեղեկատվություն ստանալու համար:

Պայմանագրի իրականացման շարունակական և նախապես իրականացվող հսկողությունը պայմանագրի գործողության ընթացքում նույնպես որոշիչ է կոնցեսիայի հաջող մատակարարման և գործարկման համար: Հետագա տեղեկատվության համար, տե՛ս *Գնումների կարճ գրություն 21- Արդունքի գնահատում* և Գնումների կարճ գրություն *22-Պայմանագրի իրականացման հսկողություն:*

Հետագա ընթերցանություն.

- ԵԱՀԿ- Ենթակառուցվածքներում մասնավոր հատվածի ներգրավման սկզբունքները (2007)
- ՊՄԳ-ների մասին Եվրոպական Հանձնաժողովի համացանցային էջը. http://ec.europa.eu/internal_market/publicprocurement/partnerships/public-private/index_en.htm
- Հանձնաժողովի մեկնաբանական հաղորդագրությունը պետական գնումների և կոնցեսիաների վերաբերյալ համայնքային իրավունքի կիրառումը ԻՊՄԳ-ի նկատմամբ -(C(2007)6661)
- ՊՄԳ-ների մասին Կանաչ Փաստաթուղթը և Պետական պատվերի պայմանագրերի և կոնցեսիաների մասին համայնքային իրավունքը (COM (2004) 327 վերջնական)
- ՊՄԳ-ների մասին հաղորդագրություն և պետական գնումների և կոնցեսիաների մասին համայնքային իրավունք (COM (2005) 569 վերջնական)
- Մրցակցային երկխոսության ընթացակարգի վերաբերյալ բացատրական գրություն
- Համայնքային իրավունքի համաձայն կոնցեսիաների վերաբերյալ մեկնաբանական հաղորդագրություն (ՊՏ 2000/C 121/2)

- ԵԱՀԿ պետական-մասնավոր գործընկերություն- *իրականացնելով ռիսկի բաժանում և գնի և որակի հարաբերակցություն*
- ԵԱՀԿ սկզբունքները ենթակառուցվածքներում մասնավոր հատվածի մասնակցության համար
- Միավորված Ազգերի տնտեսական Հանձնաժողով Եվրոպայի համար – *Ուղեգիրք պետական-մասնավոր գործընկերության մեջ պատշաճ կառավարման օժանդակման համար*